

ԹԱՐԳՄԱՆՉԱՅ ԱՎԵՏԱՐԱՆԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի № 2743 ձեռագիրը «Թարգմանչաց ավետարան» է կոչվում Արցախ աշխարհի, Գարդման գավառի Թարգմանչաց վանքի անունով, որտեղ այն գտնվում էր մինչև 1900 թվականը, Խաչենք գավառի Խադարի կամ Խաթրա վանքից տեղափոխվելուց հետո: Այդ տարում Էջմիածնի մատենադարանապետ (1897—1906 թթ.) Գարեգին վարդապետ Հովսեփյանը ձեռագիրը վանքից տեղափոխում է Էջմիածնի Մատենադարան, իսկ 1911 թ., մի քանի այլ ձեռագրերի մանրանկարների հետ միասին, առաջին անգամ գիտական շրջաններին է ներկայացնում նաև Թարգմանչաց ավետարանի մանրանկարները¹:

Այնուհետև ձեռագրի մանրանկարներին անդրադարձել են հայ մանրանկարչությամբ զբաղվող ու հետաքրքրվող համարյա բոլոր մասնագետները, բացառապես արվեստաբաններ, և կարծես «մոռացել», որ այդ մանրանկարները գտնվում են ձեռագրի մեջ, որը պետք է ուսումնասիրվեր նախ՝ որպես պատմա-մշակութային ամբողջական և ինքնուրույն հուշարձան, ապա նոր միայն՝ նրա բաղադրիչը, որքան էլ այն «ինքնուրույնություն» ձեռք բերած լինի:

Ձեռագիրն ուսումնասիրող ամեն մի մասնագետ, լինի աղբյուրագետ, բնագրագետ, արվեստաբան թե՛ հնագրագետ, պետք է մանրախույզ քննության ենթարկի հուշարձանը, պարզի ստեղծման հանգամանքները, ընձեռած հնարավորությունների սահմաններում՝ մտովին վերականգնի նրա նախնական վիճակը, բացահայտի նրա կորցրած կամ նրա վրա հավելված շերտերը և արդի վիճակի հետ համեմատելով, ուրվագծի հուշարձանի բարդ և բազմակողմանի պատմությունը:

Թարգմանչաց Ավետարանը մեզ է հասել մի քանի անգամ կազմված ու եզրահատված, ներդիրներով լրացված, վերջից պակասավոր, առանց գրված իսկապես հիշատակարանի, որը շատ հարցեր լուսաբանելու հնարավորություն կընձեռեր:

¹ Գ. Հովսեփյան, Համառոտ տեղեկություններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին, «Անահիտ», Փարիզ, 1911, № 5—6:

Այսուհանդերձ ձեռագրի նյութական կորուստը մեծ չէ. իրենց տեղերում են բոլոր պրակները և պրականիշերը (թեկուզ մի մասը եզրահատված), բացառությամբ վերջի մի քանի թերթերի և կազմի:

Պահպանվել են գրչության ժամանակի մի քանի հիշատակագրություններ՝ խորանների և կիսախորանների գերանների ու սյուների վրա և Մարկոսի ավետարանի վերջում, որոնցում նշված են ստացողի, գրչի, ծաղկողի անունները և ծաղկելու թվականը: Կան հետագա ստացողների, նվիրատվության, վերստին կազմելու և զարդարելու վերաբերյալ կարևոր հիշատակագրություններ, որոնց քննությունն առանձին հարցեր պարզելու լավ հնարավորություն է տալիս: Մատենադարանի ձեռագրերի համառոտ ցուցակի համաձայն, № 2743 Ավետարանը գրված է 1232 թ.: «Գրիչ՝ Տիրացու: Ծաղկող՝ Գրիգոր որդի Գարփին: Ստացող՝ Յովհաննէս քահանայ և ծաղկող:

Թերթ՝ 374: Մագաղաթ: 30×23 : Երկայուն: Բոլորագիծ երկաթագիր: Տող՝ 17: Մանրանկար՝ տերունական՝ 7, ավետարանիչ 2, խորան 10, կիսախորան, լուսանցազարդ: Կազմ՝ կաշեպատ տախտակ դրոշմազարդ: Աստառ կարմիր մետաքս: Հիշատակարան գրչի՝ 7բ, 8ա, 12ա, 183ա, ծաղկողի՝ 9ա, 10ա, 10բ, 115ա, 293բ, հետագայի՝ 113բ, 183ա (ԺԳ—ԺԴ դդ.), 183ա (ԺԵ դ.), 114բ, 184բ (ԺԶ—ԺԷ դդ.), 294բ (1843 թ.), 295ա (1889 թ.)»²:

Հենց այստեղից ձեռագրի բախտը չի բերել. բերված տվյալների մի մասը ճիշտ չէ³:

Թարգմանչաց ավետարանը թերթակալված է մատիտով 20-րդ դարում և որոշ թերթերի ձամարներ բաց են թողնված ու կրկնված: Թերթակալողը բաց է թողել 177, 222, 266 և կրկնել 293 թերթահամարները: Ուրեմն ձեռագրի թերթերի ճիշտ քանակը 372 է: Այդպես էր Թարգմանչաց վանքում, այդպես է և այսօր Մատենադարանում⁴:

Թարգմանչաց ավետարանն այսօր ունի $30,1 \times 23,2$ սմ մեծության մագաղաթյա սպիտակ, լավ մշակված 372 թերթ: Գրությունը երկայուն է, յուրաքանչյուր սյունակ ունի $23,5 \times 7,1$ սմ մեծություն, 2 սմ միջին և 3 սմ արմատի լուսանցքներ: Տառերը գրված են 0,6 սմ հեռավորության զույգ տողերի մեջ, տողերի քանակը 17 է, իսկ տողերի միջի տարածությունը՝ 0,9 սմ: Տողագծերը և սյունագծերը արված են ճնշումով:

Ամբողջ ձեռագիրը գրված է միջին մեծության գեղեցիկ երկաթագրով, որոշ էջեր՝ դեպի ձախ հակված գրերով: «Յարուցեալ Յիսուս» հատվածը, համաբարբառը՝ խորաններում, ցրվացանկը և գլխակարգությունը՝ աղյուսակ գրով: Պրակների թիվը 46 (Ա—ԽԶ) է, սկսվում է Մատթեոսի ավետարանի առաջին թերթից մինչև ձեռագրի վերջը: Ամեն մի պրակ կազմված է ութական թերթերից, բացառությամբ յուրաքանչյուր ավետարանի վերջին պրակի, որոնք ունեն այնքան թերթ, ինչքան հարկավոր է բնագրի վերջին մնացած մասը տեղավորելու համար. այսպես՝ Մատթեոսի ավետարանի վերջին ԺԳ պրակն ունի 4 թերթ, Մարկոսինը՝ (ԻԲ պրակ) 3, Լուկասինը՝ (ԼԶ

² «Ցուցակ Ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, Երևան, 1965, էջ 866:

³ Սրբագրությունները՝ շարադրանքի ընթացքում:

⁴ Մատենադարանի Մայր մատյանում, Մայր քարտում՝ 314 է, հավանաբար շփոթված է 7-ը 1-ի հետ: Լ. Չուգասզյանը ևս ձեռագրի ծաղկողին նվիրված ուսումնասիրության մեջ գրում է. «ձեռագիրն ունի 374 էջ» (ուզում է ասել՝ թերթ), իսկ այդքան էջը 187 թերթ է: Կատարված է կրկնակի սխալ («Գրիգոր ծաղկող», Երևան, 1986, էջ 7: Այսուհետև՝ «Գրիգոր ծաղկող»):

պրակ) 5, Հովհաննեսինը՝ (ԽԶ պրակ) 7, (որի վերջից մի քանի թերթ պակասում է): Սրանցից բացի Ղուկասի Ավետարանի ԽԹ պրակը կազմված է 6 թերթից (բնագիրը լրիվ է):

Պրակավորումից դուրս է սկզբում դրված Եվսեբիոսի թղթի 2 և համաբարբառների 8 խորանների 10 թերթանոց պրակը: Ըստ այսմ Մատթեոսի Ավետարանն ունի $(8 \times 12 =) 96 + 4 = 100^5$, Մարկոսինը՝ $(8 \times 8) = 84 + 3 = 67^6$, Ղուկասինը՝ $(8 \times 12 =) 96 + 5 + 6 = 107^7$, Հովհաննեսինը՝ $(8 \times 10 =) 80 + 1 = 79^8$: Ամբողջ ձեռագիրն ունի $100 + 67 + 107 + 79 = 353$ թերթ + 10 թերթ (խորաններ) — 363 թերթ: Այս 363-ը ձեռագրի ստեղծման ժամանակից մեզ հասած թերթաքանակն է, որին գումարում ենք հետագայում կատարված ներդիրներից պահպանված 9 թերթը և ստանում 372 թերթ, այսօրվա թերթաքանակը:

Ներդիրները Մատթեոս և Հովհաննես Ավետարանիչների և յոթ տերունական նկարներն են⁹, որոնք մուծված են ձեռագրի թերթերի արանքներում, ընդ որում յուրաքանչյուր ներդիրի արմատը մտցված է բուն թերթի արմատից ներս և մյուս կողմում ծալված և սոսնձված: Սոսնձումը ավելի ուշ է արված, հավանաբար որոշ ներդիրներ կորցնելուց հետո:

Ձեռագիրը պրակակալված է երկու անգամ: Առաջին պրակակալումը գրչության ժամանակից է: Այս պրականիշերը դրված են եղել յուրաքանչյուր պրակի առաջին թերթի ա և վերջին թերթի բ երեսներում, ստորին լուսանցքի կենտրոնում, գրվել են գրչության երկաթագրով և վերից-վարից առնըվել պատիվների մեջ: Վերջին անգամ կազմելու ժամանակ եզրահատվել են այս պրականիշերի մեծ մասը: Տեղ-տեղ պահպանվել են վերին բաժանարարները, որոշ մասեր՝ տառերից, ինչպես նաև ամբողջական պրականիշեր: Երկրորդ պրակակալումը կատարված է ձեռագրի վերջին, հավանաբար երրորդ անգամ կազմելուց առաջ:

Առաջին անգամ, բնականաբար, կազմվել է ձեռագիրն ավարտելիս, երկրորդ անգամ, հիշատակագրության համաձայն՝ 1312 թ.: Այժմյան կազմը արժաթապատը չէ: Ուրեմն կազմվել է նաև երրորդ անգամ և ձեռագիրը եզրահատվել է երեք անգամ: Ահա այս երրորդ կազմից առաջ, եզրահատելուց հետո կատարվել է երկրորդ պրակակալումը, երկու տարբեր գրիչների կողմից: Սրանցից առաջինը պրակակալումն սկսել է խորաններից, որոնք գրչի (առաջին) պրակակալումից դուրս են¹⁰:

Բոլորգիր ա է նշանակված առաջին թերթի ա էջի ստորոտում և առնըված բաժանարարների մեջ: Նույնպիսի ա է նշանակված նաև վերջին 10-րդ թերթի բ էջի ստորոտում և առաջին տասը թերթերը դարձրած առաջին պրակ:

⁵ Ա(8) + Բ(8) + Գ(8) + Դ(8) + Ե(8) + Զ(8) + Է(8) + Ը(8) + Թ(8) + Ժ(8) + ԺԱ(8) + ԺԲ(8) + ԺԳ + (4) = 100:

⁶ ԺԴ(8) + ԺԵ(8) + ԺԶ(8) + ԺԷ(8) + ԺԸ(8) + ԺԹ(8) + Ի(8) + ԻԱ(8) + ԻԲ(3) = 67:

⁷ ԻԳ(8) + ԻԴ(8) + ԻԵ(8) + ԻԶ(8) + ԻԷ(6) + ԻԸ(8) + ԻԹ(6) + Լ(8) + ԼԱ(8) + ԼԲ(8) + ԼԳ(8) + ԼԴ(8) + ԼԵ(8) + ԼԶ(5) = 107:

⁸ ԼԷ(8) + ԼԸ(8) + ԼԹ(8) + Խ(8) + ԽԱ(8) + ԽԲ(8) + ԽԳ(8) + ԽԴ(8) + ԽԷ(8) + ԽԶ(7) = 79:

⁹ Ներդիրները կրում են 11, 15, 20, 114, 170, 184, 188, 294, 295 թերթահամարները:

¹⁰ Այդպես է համարյա հնագույն բոլոր ձեռագրերում, անկախ այն բանից, թե գրիչն ու նկարիչը միևնույն մարդն է, թե ոչ: Պրակակալում են չորս Ավետարանները: Հետագայում, երբ բնագրում նաև տերունական նկարներ են կատարվում, այդ թերթերը, բնականաբար, մաս են կազմում պրակների և խորանները դառնում են առաջին պրակ:

Երկրորդ պրակի միջև՝ բ գրված է խորանների և գրչի ա պրակի մեջ-տեղում ներդրված Մատթեոս ավետարանիչի նկարի ա էջում: Այսպիսով պր-րակակալողը ներդիրն առնում է պրակահաշվի մեջ: Որովհետև գրչի Ա պր-րակում երկու այլ ներդիրներ կային, դրանք էլ գումարելով պրակի ութ թեր-թերի վրա, ստանում է 11 թերթանոց պրակ, և Ա պրակի վերջին թերթի վրա գրում Բ, և սրանով գրչի Ա պրակը դառնում է կազմողի Բ պրակ:

Հավանաբար նկատելով գրչի պրակահիշերի հետքերը, ինչպես նաև պրակների կանոնավորությունն ու ամբողջական միջերը, զգուշանում է սը-խալը խորացնելուց, ընդունում է Տիրացու գրչի մշանակումները և հաջորդ պրակի վերջում կրկին մշանակում է Բ, այսինքն երկու անգամ երկրորդ պր-րակ է մշանակում, որպեսզի այլևս չխախտի ձեռագրի բուն պրակակալու-մը, և, այնուհետև, պարզապես շարունակում է լրացնել եզրահատված պր-րակահիշերը:

Ղուկասի ավետարանից սկսած՝ փոխվում են պրակներ մշողը, գրիչ գործիքը և գիրը՝ բոլորգրի փոխարեն՝ շղագիր: Պրակահիշերը լրացվում են նույն սկզբունքով, մինչև Ղուկասի ավետարանի վերջին, ԼԶ պրակը, որն ունի 5 թերթ: Սրան ավելացնում է հաջորդ երկու ներդիր թերթերը և անտե-սելով Հովհաննեսի ավետարանի առաջին թերթի պրակահիշը (ԼԷ), այդ թերթն էլ գումարում է մախորդների վրա, և կազմում ութ թերթանոց մի պր-րակ՝ (ԼԶ), կրկնելով իրենից առաջ պրակակալողի սխալը: Հաջորդ պրակը (ԼԷ) բնականաբար յոթ թերթանոց է դառնում: Բարեբախտաբար հաջորդ ԼԸ-ից սկսած պահպանվել են բուն պրակահիշերը, և պրակակալողին ոչինչ չէր մնում անել, եթե միայն ընդունել այն և լրացնել միայն եզրահատված պրակահիշերը:

Վերջին՝ ԽԶ պրակահիշը դրված է պրակի յոթերորդ թերթի վրա: Այս մշանակում է, որ երկրորդ պրակակալման ժամանակ արդեն վերջին պրակի վերջին թերթը և հաջորդ պրակները հիշատակարանի հետ թափված են ե-ղել: Ձեռագրի երկրորդ պրակակալումը նույնպես ցույց է տալիս, որ ձեռա-գիրը իսկապես գրվել է ութ թերթանոց պրակների վրա:

Ձեռագրում պահպանված վերջին ԽԶ պրակի յոթերորդ թերթից հետո մնացած բնագիրը կարելի է տեղավորել երկու և կես թերթի վրա¹¹:

Այսպիսով, երկրորդ պրակակալումը տեղի է ունեցել ձեռագրի վերջին թերթերը, հիշատակարանը և կազմը կորցնելուց հետո: Բայց այդ ժամանակ արդեն կային ներդիրները, որոնք, ինչպես նաև նկարչի կողմից բնագրի թերթերի լուսանցքներում կատարած լուսանցապատկերները, տուժել են կազմելու ժամանակ թերթերի եզրահատումից:

Ձեռագրի կառուցվածքային հիմք հանդիսացող պրակների կայունու-թյունը և նրանց պահպանվածությունն ապացուցում է, որ այն գրվել ու ծաղ-կրվել է այդ պրակների վրա, իսկ նրանցից դուրս մուծված նկարազարդ թերթերը ներդիրներ են և հետմամուտ են:

ՏԻՐԱՑՈՒ ԳՐԻՉ

Ձեռագրի գրիչը Տիրացուն է, որի անունը պահպանվել է իր իսկ ձեռ-քով գրված հիշատակագրության մեջ, Մարկոսի ավետարանից հետո գե-րված

¹¹ Այդ թերթերից առաջինը ԽԶ պրակի վերջին թերթն է եղել. մյուսը՝ ԽԷ պրակի առաջին թերթը, ուր ավարտվել է Հովհաննու ավետարանը. ԽԷ պրակի երկրորդ թերթի ա էջում: Այնուհետև գրվել է հիշատակարանը, որի զբաղեցրած թերթի քանակը հայտնի չէ: (Աստուածաշունչ, Վենետիկ, 1860, էջ 1044):

տեղված «Յարուցեալ Յիսուս» հատվածի վերջում. «**Զմեղապարտ գրծիչս՝
գՏիրացու յիշեցէք ի Տէր**» (էջ 183ա): Սույն հատվածը, հիշատակագրության
հետ միասին, գրված է աղյուսակ գրով (ուղղագիծ երկաթագիր): Այս հիշա-
տակագրությամբ գրիչը, որ ամբողջ ձեռագիրը գրել է գեղեցիկ երկաթա-
գրով, հավաստում է, որ ինքն է գրիչը նաև աղյուսակ գրատեսակով գրված
մյուս գրությունների: Վարժ և հմուտ գրիչ է Տիրացուն, հավասարապես
գրում է բոլոր գրատեսակներով: Ինքն է կատարել նաև սրբագրություննե-
րը: Լուսանցքներում գրելով բառի կամ տառի ուղիղ ձևը, տգրկիկով ցույց է
տալիս բնագրի մեջ սխալները, և ճիշտ ձևը՝ լուսանցքում: Սրբագրություննե-
րը, ինչպես նաև խորանամեջ գրությունները, տնագլուխ համարներն ու ցր-
վացանկերը գրված են մանր, միահավասար աղյուսակ գրով, տեղ-տեղ օգ-
տագործել է նաև բոլորգիրը: Այսպիսով, ավետարանառաջներից սկսած
մինչև վերջ բոլոր գրությունները Տիրացու գրչինն են: Գլխագրերը նույնպես
ունեն չափավոր մեծություն, և գտնվում են գրադաշտում: Ավետարանների
սկզբնաբառերը, որ գրվում են զարդագրից հետո, ոսկեպատել է ծաղկողը:

Տիրացու գրիչը, որպես կանոն, շատ հավատարիմ է մնացել գաղափար
օրինակին, որը, ինչպես երևում է կետադրական ինքնատիպ նշաններից,
ը ձայնավորի գործածության յուրահատկությունից և ձեռագրի ձևավորման
կանոնավորությունից, եղել է նշանավոր, ընտիր օրինակ: Այսպես, որոշ տե-
ղերում, որպես կետադրության նշան, դնում է պատիվը՝ վրան կետ ցույց
տալու համար, որ բառը չի հապավված: Երբեմն դրվում է այդ նշանի մի
կամ մյուս կեսը: Այն դրվում է նաև Ի նախդիրի վրա, իսկ ավելի հաճախ
նախդիրի վրա դրվում է հորիզոնական փոքրիկ գծիկ (-): Որոշ տառերի
վրա դրվում է ուղղահայաց գծիկ ('):

Ը ձայնավորը հաճախ է գրվում, ոչ միայն տողադարձերի ժամանակ,
բառի տողավերջին մնացող կամ բաժանվող մասում, այլև սովորական գրու-
թյան մեջ, զրնա զրհետ, դրափր:

Որոշ անուններ ունեն գրության այլ ձև, օրինակ՝ **Նաաստովն** գրվում
է **Նայասըսովն**, **Բոռս**-ը **Բոյոս** ձևով, գործածում է հարցական, բացական-
չական, ստորակետ, վերջակետ, կետ-ստորակետ, տգրկիկ, փշիկ նշաններ:
Եթե պատվագրված բառը բացականչականի պետք ունի, ապա դրվում է
պատվի նշանի վրա, Ած: Շատ քիչ է բառանջատումը:

ԳՐԻԳՈՐ ԾԱՂԿՈՂ

Ձեռագիրը ծաղկողը կամ ծաղկազարդողը Գրիգորն է: Առաջին տասը
թերթերի վրա Եվսեբիոսի թուղթն է՝ ուղղված Կարպիանոսին և համաբար-
բառի խորանները, որոնք զբաղեցնում են 1բ—2ա, 3բ—4ա, 5բ—6ա, 7բ—
8ա, 9բ—10ա հանդիպակաց էջերը: Այս ամբողջովին ծաղկող Գրիգորի գոր-
ծըն է, որի անունը պահպանվել է Մարկոսի ավետարանառաջի գլխազարդի
ստորին գերանի վրա. «**Տէր Աստուած ողորմեա Գրիգորի ծաղկողի, ամէն,
ամէն**» (115ա):

Գրիգոր ծաղկողը առաջին զույգ թերթերի հանդիպակաց էջերում պատ-
կերել է երկու խորան, որոնց ուղղանկյունների մեջտեղում, շրջանակների
մեջ նկարել է Եվսեբիոս Կեսարացուն և Կարպիանոսին: Խորանների երկու
սյուների միջև նամակն է: Ստորին գերանից՝ եզրալուսանցքներում սյունե-
րի հետ բարձրանում են իրար նման մեկական ծառ: Նույն ձևով են ներկա-
յացված նաև մյուս թերթերի հանդիպակաց խորանները, միայն նրանք ու-
նեն երեքական սյուներ: Գրիգոր ծաղկողը օգտագործում է վառ գույներ և

գեղեցիկ համադրությամբ ստեղծում իսկապես «ծաղկազարդ բուրաստան»:

Խորանների հաջորդում է առաջին պրակը, որի առաջին թերթի ա էջից սկսվում է Մատթեոսի Ավետարանը: Ավետարանառաջը ծաղկազարդել է Գրիգոր ծաղկողը: Խորանի գլխազարդը քառանկյուն է, որի ստորին մասում ձգված գերանի վրա ստացողի մասին հիշատակագրությունն է, իսկ շրջանակը հայկական գորգի զարդանախշեր ունի: Քառանկյան կենտրոնում շրջանաձև մեծ զարդանախշ է, աջ և ահյակ կողմերում՝ ավելի փոքր զույգ-զույգ շրջանաձև այլ զարդեր:

Ավետարանն սկսվում է «Գ» զարդագրով, որի վերջույթներն ավարտվում են եռանկյունաձև նախշազարդով: Տառի թևի տակ, գահավորակի վրա բազմած է Մատթեոս ավետարանիչի խորհրդանիշ մարդ-հրեշտակը՝ ձեռքին Ավետարան: Այն ավելի շատ համահնչում է նախորդ ներդիր թերթի Մատթեոսի նկարին, քան ծաղկողի զարդարվեստին:

Գրիգոր ծաղկողն այնուհետև ծաղկազարդել է ողջ ձեռագիրը լուսանցազարդերով և զարդագրերով, գերազանցապես օգտագործելով կապույտ, կարմիր, գույները: Ձեռագրում երբ զարդագիրը ընկնում է զույգ էջերի եզրալուսանցքի կողմում, նրան մերձ նկարում է լուսանցազարդը (13, 14բ, 29բ, 46բ և այլն), իսկ երբ զարդագիրը թերթի արմատին կամ միջին լուսանցքին կից է, լուսանցազարդը նկարվում է ոչ թե նրան մերձ, այլ նրա դիմաց՝ դարձյալ եզրալուսանցքում (16բ, 18ա, 19ա, 21բ և այլն): Մատթեոսի ավետարանառաջի և խորանների պրակի արանքում գտնվում է Մատթեոս ավետարանիչի նկարի ներդիրը: Այն չի պատկանում երկու կից պրակներից ոչ մեկին, նրանցից դուրս է և հետնամուտ: Ներդիրներ են նաև 15, 20 և 114 թերթերը, որոնք ներկայացնում են համապատասխանաբար՝ «Ծնունդ Փրկչին» «Մկրտություն Տեառն» և «Յարութիւն Տեառն» նկարները:

Մատթեոսի ավետարանն ավարտվում է չորս թերթանոց ԺԳ պրակի վերջին թերթի ա երեսում (էջ 113ա), իսկ բ երեսը ամբողջովին ազատ է: Այստեղ կարող էր նկարվել հաջորդ ավետարանիչ Մարկոսի նկարը, բայց չկա: Ուրեմն այն ծաղկողը չի նկարել գրչության ժամանակ: Նոր պրակը ԺԴ-ն սկսվում է հաջորդ ավետարանառաջով, գլխազարդով, զարդագրով, ավետարանիչի խորհրդանիշով, լուսանցազարդով և երկրորդ սյունակի ինն տող ոսկեպատ երկաթագրով (որը դարձյալ ծաղկող Գրիգորի գործը չէ): Վերջին գիրը, ինչպես նաև խորագիրը՝ «Ավետարան ըստ Մարկոսի» Տիրացու գրչի ձեռքով է արված, մնացածը՝ Գրիգոր ծաղկողի: Գլխազարդի ստորին գերանի վրա ծաղկողի մասին հիշատակագրությունն է. Այս ավետարանառաջի և Մատթեոսի վերջին պրակի արանքում տեղադրված ներդիրը՝ «Յարութիւն Տեառն» մանրանկարը, երեսով ոչ թե դեպի Մարկոսի ավետարանառաջն է, այլ՝ Մատթեոսի վերջին՝ անգրել էջը:

182ա էջում ավարտվում է Ավետարանն ըստ Մարկոսի, որից հետո շարունակվում է «Յարուցեալ Յիսուս» հատվածը, գրված աղյուսակ գրով, և վերջանում գրչի մասին հիշատակագրությամբ (183ա): Հաջորդ սյունակը և մյուս էջը, դարձյալ ազատ-անգրել է, որտեղ կարելի էր Ղուկաս ավետարանիչին նկարել, բայց չի նկարված:

Ղուկասի ավետարանն սկսվում է ԻԳ պրակի առաջին էջով, զարդարված ավետարանառաջով: Այս ավետարանառաջի և Մարկոսի վերջին թերթի արանքում, կրկին մուծված է տերունական «Աւերումն դժոխոցն» (բնագրում՝ «Աւարումն...») ներդիրը, դարձյալ երեսով դեպի ավարտվող ավետարանը և ոչ սկսվողը:

Ղուկասի ավետարանն ավարտվում է 294ա էջում, որի հաջորդ էջը դարձյալ ազատ-անգրել է և չնկարված: Հաջորդ՝ Հովհաննու ավետարանի զարդարված ավետարանառաջի և նախորդի վերջին էջի արանքում մուծված են երկու ներդիրներ. առաջինը՝ «Ննջումն Աստուածամարն» նկարն է, երեսով դեպի Ղուկասի ավետարանը, և երկրորդը՝ Հովհաննես ավետարանիչի և Պրոխորոնի նկարը՝ երեսով՝ Հովհաննու ավետարանառաջը:

Արդեն ասել ենք, որ Հովհաննու ավետարանի վերջից թերթ է պակաս:

Ամենայն հավանականությամբ, այդ թերթերի մեջ, ավետարանի վերջում նույնպես եղել է մի ներդիր, որը «փակել» է Հովհաննու ավետարանը:

Ինչպես տեսնում ենք, այստեղ առկա է նկարազարդման երկու օրինաչափություն. մի կողմից Գրիգոր ծաղկողի աշխատանքն է, համաբարբառի 10 խորանների, չորս ավետարանառաջների և լուսանցազարդերի ու զարդագրերի նկարազարդումը, կատարված ձեռագիրը գրելու ժամանակ, որն հաստատվում է պրակների կայուն հենքով, ծաղկողի հիշատակագրությամբ, զարդարանքի և զարդարվածության միասնական ոճով: Մյուսը մի այլ նկարիչ, որը նույնպես աչքի է ընկնում, որն իր որոշակի, հազվադեպ հանդիպող օրինաչափությամբ. բոլոր տերունական նկարները (7) և ավետարանիչները դասավորված են այսպես. Ավետարանիչների նկարները ներդրված են ավետարանառաջների դիմաց, որտեղ սովորաբար նկարվում են: Յուրաքանչյուր ավետարանի վերջ փակվում է տերունական մի նկարով:

Մատթեոս ավետարանիչը և «Յարութիւն Տեառն» մանրանկարները սկզբից և վերջից իրենց մեջ են ամփոփում Մատթեոսի ավետարանը: Մարկոս ավետարանիչի նկարը, (որ այժմ բացակայում է) և «Աւերումն դժոխոց» մանրանկարները սկզբից և վերջից ամփոփում են Մարկոսի Ավետարանը: Ղուկաս ավետարանիչի (որ այժմ բացակայում է) և «Ննջումն Աստուածամարն» մանրանկարները ամփոփում են Ղուկասի ավետարանը, և վերջապես Հովհաննես ավետարանիչի և Պրոխորանի նկարը՝ սկզբից և մի տերունական նկար (որ այժմ չկա) ամփոփել են Հովհաննու ավետարանը:

Ելնելով սրանից կարող ենք համոզված կերպով պնդել, որ այժմ բացակա Մարկոս և Ղուկաս ավետարանիչների նկարները մյուս ավետարանիչների հետ նկարված և տեղադրված են եղել իրենց տեղերում, ինչպես նաև վերջում եղել է տերունական մի նկար ևս, այսինքն այժմյան ինն մանրանկարի փոխարեն եղել է առնվազն տասներկու ներդիր: Քանի որ Մատթեոսի Ավետարանը օժտված է ավետարանիչի նկարով, փակող տերունական նկարով և տերունական երկու այլ նկարներով, հավանական ենք համարում, որ բոլոր չորս Ավետարաններն էլ օժտված են եղել չորսական նկարներով, այսինքն չորս ավետարանիչների նկարներով և տասներկու տերունական նկարներով, ինչպես լինում է սովորաբար: Սակայն հնարավոր է նաև, որ միայն տասներկու ներդիր է եղել. չորս ավետարանիչներ և ութ տերունական նկարներ: Ինչպես տեսնում ենք, Թարգմանչաց Ավետարանում մենք գործ ունենք մանրանկարչական երկու ձևավորման հետ, որոնք կապվում են տարբեր ժամանակների և տարբեր անհատականությունների հետ:

Ցավոք, ոչ ոք Թարգմանչաց Ավետարանի, որպես ձեռագրական հուշարձանի, ըստ ամենայնի չի անդրադարձել, արվեստաբաններից շատերը պարզապես կրկնել են իրար, ոմանք էլ անհրաժեշտ ժամանակ ու հնարավորություն չեն ունեցել այն քննելու: Ձեռագրական հուշարձանի ուսումնասիրման առաջին նախապայմանը ժամանակի և տարածության մեջ նրա հիշտ տեղադրումն է, որով և ուրվագծվում է այն որոշակի միջավայրը, որի

ծնունդն է նա: Իսկ մի ձեռագիր, որի մեջ ուսումնասիրողը երկու նկարիչ է տեսել (երկու ժամանակ, երկու միջավայր) առանձնակի հետազոտման է արժանի: Այս հանգամանքների անտեսումը, միակողմանիորեն պատկերա-գրական վերլուծություններով տարվելը հանգեցրել են այն բանին, որ իրա-պես տարբեր ժամանակներում ու վայրերում ստեղծագործած երկու արվես-տագետներ դարձել են մի «Գրիգոր ծաղկող»:

ԳՐԶՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ՎԱՅՐԸ

Գրիչ Տիրացուի և ծաղկող Գրիգորի մասին վկայություններից բացի, վերջինիս ձեռքով ունենք նաև ծաղկազարդելու թվականի վերաբերյալ հի-շատակագրություն, գրված համարաբառի վերջին զույգ խորանների գլխա-զարդերի ստորին գերանների վրա. «Ի թիս **ՈԶԱ (1232)** ծաղկազարդեցաւ սուրբ // Աւետարանս բարեխաւս առ Ք[րիստո]ս Յ[իսու]ս ի Տ[է]ր մեր» (9բ—10ա):

Թվականը կրկնված է նաև 311ա էջում, լուսանցազարդի շրջանակի մեջ՝ «**Թիս ՈԶԱ (1232) ծա[ղկեցաւ]**»:

Ուրեմն Թարգմանչաց Ավետարանը ծաղկազարդվել է 1232 թվականին: Գրիչը և ծաղկողը միասին են աշխատել, ուստի ծաղկազարդման ավարտը նաև գրչության ավարտն է: Ձեռագիրն, այսպիսով ավարտվել է 1232 թվա-կանին:

Դարձյալ ծաղկող Գրիգորն է գրում խորանների գերանների և սյունե-րի վրա ստացողի մասին վկայությունները՝ «**Տէր Աստուած, ողորմեա պատ-ուական քահանայի եւ երեւելի պարոնի Յովաննիսի, ամէն**» (7բ), «**Ջհովանն-էս աստուածազարդ քահանայ եւ զԽաչիկ հայր իւր յիշեսցիք ի Քրիստոս Յիսուս, ի Տէր**» (8ա) «**ՋՅովաննէս առագերեց յիշեա Տէր Աստուած ամէն**» (12ա): Այս բոլորը վրձինով գրել է Գրիգոր ծաղկողը: Ոչ էլ նա որդին է «Գարփին»: Ծաղկողին շփոթել են հետագա ստացող «Դաւիթ որդի Գրի-գորի» հետ (տե՛ս Ձեռագրացուցակը):

Այսպիսով, անհայտ է մնում գրչության կենտրոնը, ուր աշխատել են վարպետ գրիչն ու ծաղկողը, և որոնց իր ցանկալի շքեղ Ավետարանի ստեղ-ծումը վստահել է պարոն Հովհաննէս քահանան: Այս հարցերին անդրադար-ձել է արվեստաբան Լ. Զաքարյանը, որը նկատի առնելով «ձեռագրի գե-ղանկարչության որոշ առանձնահատկություններ», նրա պատվիրատուին փնտրում է Հայաստանի արևմտյան շրջաններում:

13-րդ դ. առաջին կեսին Կարին քաղաքում ապրում էր Հովհաննէս ա-նունով մի պարոն՝ Ումեկյան նշանավոր գերդաստանի ազգականներից: Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու վկայությամբ, մոնղոլների կող-մից Կարինը գրավելու հետևանքով, Ումեկյանների գերդաստանը՝ ազգա-կաններով տեղափոխվում է Հայաստանի արևելյան կողմերը և բնակվում Լոռու շրջանում: Նրանք հավանաբար իրենց հետ բերել են նաև Հովհան-նէս պարոնի Ավետարանը¹²: Բայց ի՞նչ կապ ունի Թարգմանչաց Ավետա-րանը Կարինի հետ: 1230 թ. Կարինում Գրիգոր անունով մի գրիչ գրում և ծաղկում է մի Ավետարան սեփական օգտագործման համար: Այդ ձեռա-գիրը այժմ պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարա-նում: Ձեռագրում այժմ կան միայն երկու կիսախորաններ և լուսանցազար-դեր: «Դժվար չէ նկատել պահպանված կիսախորանների, ավետարանիչների

¹² Լ. Զաքարյան, «Թարգմանչաց» Ավետարանի մասին, ՊԲՀ, 1969, № 2, էջ 167—168:

խորհրդանիշերի և լուսանցագարդերի բացառիկ ոճական նմանությունը «Թարգմանչաց» Ավետարանի նույնանուն նկարաթերթերի հետ: Կրկնվում են զարդանկարչական մոտիվներն ու զարդագրերը, հատկանշական քանատերև կամ շրջանակաձև լուսանցագարդերը՝ հավելյալ ցողուններով: Թվում է, թե նույնն է նաև օգտագործված ներկապակը՝ «Թարգմանչացի» գույս, նուրբ ու բարձր ճաշակի արտահայտության գունաշարը, անկրկնելի կապույտով»¹³:

Լ. Զաքարյանը Կարինի և Թարգմանչաց Ավետարանների մանրանկարները վերագրում է նույն Գրիգոր ծաղկողին, իսկ վերջինիս գրչության վայրը ենթադրաբար համարում է Կարինը:

Ծանոթանանք Կարինի Ավետարանի գլխավոր հիշատակարանին: Նրա գրիչ Գրիգորը գրչության արվեստը սովորել էր հորից՝ Խաչատուր քահանայից, որ էր «...յոյժ հմուտ եւ հոճտոր այսմ արհեստի»: Շատ էր ցանկանում ունենալ ժամանակի հռչակավոր գիտնական և գրչության խոշոր վարպետ Գրիգոր Մուրղանեցու գրած Ավետարանի ընդօրինակությունը: Եվ ահա գտնում, ընդօրինակում է, և շատ գոհ է, «իսկ ես եղկելիս, Գրիգոր գրիչ, փափագող եղեալ այսմ անմահական ըմպելոյ... Եւ ետ Տէր զխնդրուածս իմ, զի ի վաղուց ժամու ցանկացեալ էի այսմ անգիտ մարգարտիս եւ ամենալաւ արինակիս, որ կոչի Գրիգորի Մուրղանեցոյ, ճարտարագիծ գրչի եւ անյաղթ գիտնականի: Եւ ըստ յաջողելոյն Աստուծոյ՝ եղեւ ըստ կամաց իմոց: Եւ ես ըստ կարի իմում՝ բազում աշխատութեամբ գծագրեցի իմով ձեռամբ»¹⁴:

Ավետարանն ավարտել է 1230 թվականին, Կարինում, «Ի հոյակապ եւ ի հռչակաւոր քաղաքիս Թեոդոպալիս, ընդ հովանեաւ Սրբոյ Յարութեանս»:

Զեռագրից պակասում են առաջին 10 թերթերը, որոնց վրա խորաններ էին, և Մարկոսի և Հովհաննու ավետարանառաջները: Զեռագիրն ունի 52 պրակ, բոլորը ութական թերթ, բացառությամբ Ժ (որն ունի 3), ԺԶ (10), ԻԴ (9), Խ (4) և ԾԲ (6) թերթ, որոնց գումարը՝ 32 թերթ է, կամ 4 պրակ:

Փաստորեն Թեոդոպոլսի (Կարինի) Ավետարանը ավետարանիչների նկարներ չի ունեցել, այնպես, ինչպես Թարգմանչաց Ավետարանը, որը նույնպես Գրիգոր Մուրղանեցու ճարտարագիծ գրչի և անհաղթ գիտնականի ամենալավ օրինակից պետք է ընդօրինակված լինի: Ապացույց՝ ոչ միայն ծաղկազարդման նույն եղանակը, այլև գրչության նմանությունը, որոնք գալիս են գաղափար օրինակից՝ համաբարբառի 10 խորաններ, չորս ավետարանառաջներ (գլխազարդով, մեծ զարդագրով, ավետարանչի խորհրդանիշով, լուսանցագարդերով, կարմիր, աղյուսակագիր խորագրով և ոսկեպատերկաթագիր (բնագրով) լուսանցագարդեր և զարդագրեր: Ընդ որում, գլխավոր ավետարանները զարդագրով սկսելուց հետո, առաջին տողը ամմի-

¹³ Նույն տեղում, էջ 169:

¹⁴ Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ, էջ 572 Հիշատակարանում հորից՝ Խաչատուր քահանայից բացի հիշում է մորը (առանց անունը տալու), քույրերին, Թանկերին, Ազգերին, Ակներին, փեսային՝ Վահրամին («զսիրելի անձին իմոյ»), Հովասափ փիլիսոփային՝ իրենց հոգևոր եղբորը: Այնուհետև հիշում է ձեռագրի գրչությանը դրամով կամ աշխատանքով օգնողներին—պատանի պարոն Վարդ բարեգործին «որ աշխատեցաւ ի պարգել թղթոյս եւ մասն ինչ եղ յԱվետարանս յարդար ընչից իւրոց», մորաքույր Գոհարին՝ հանդերձ որդիներով «որ եւ սա մասն ինչ եղ յԱվետարանս», Ազատ տիկնոջն ու դստերը (վախճանեալ) «եւ սա սակաւ ինչ ազնական եղաւ» Խաչատուր վարդապետին և Ավետիս քահանային («որ ի մագաղաթս աշխատեցաւ ընդ իս»): Անդ՝ էջ 572—573:

շապես շարունակվում է ոսկեպատ երկաթագրով: Նմանություն կա նաև երկու ավետարանների գրչության մեջ, որը ավելի է հաստատում նրանց նույն շտապիղին պատկանելը:

Բ. Սարգիսյանը Թեոդուպոլսի ձեռագիրը նկարագրելիս կետադրության մասին գրում է. «ստորակետերեն, միջակետերեն և վերջակետերեն զատ՝ հաճախ գործածված է նաև կետ և ստորակետ ի միասին, այսպես (;), որ լատին կամ հունալատին ուղղագրությամբ ելած փոխառություն համարելի է»: Նույն բանը մենք ունենք Թարգմանչաց Ավետարանի գրիչ Տիրացուի մոտ: «Տողադարձին «ը» կավելացվի ոչ միայն ավարտող տողավերջի «զ» նախորդին, այլև սկսվող տողի բաղաձայնին քով, դնելով հավելյալ ձայնավորին վրա փշիկ մ'ալ»,—և բերում է օրինակներ, որոնց նույնությամբ հանդիպում ենք Տիրացուի մոտ. օրինակ. զը-նա, ցը-նոսա, յայս-ըկոյս, յայն-կոյրս և այլն: Այդ փշիկը կամ գծիկը դրվում է նաև «ի» նախորդի վրա:

«Հատուկ անուններեն շատերն իսկ տարբեր ուղղագրությամբ գրված են այսպես՝ Նաաստվնը գրված է՝ Նայաստվն, Բոոսը՝ Բոյոս, Ռոբովամը՝ Ռոբոյամ, Յովհաննէսը (Մկրտիչ)՝ Յոաննէս և այլն: Նույն բանը Տիրացուի մոտ է, 12բ էջում. Նայաստվն, Բոյոս, Ռոբոյամ: Թեոդուպոլսի ավետարանում. «Այդ յարուցեալ առաւատուց ի միաշաբաթուց երեկեցաւ նախ Մարեմայ Մակդաղենացոյ» և այլն (Մարկոսի ավետարան): Թարգմանչացում, (էջ 182ա) նույնն է. «առաւատուց, միաշաբաթուցն», մակդաղենացոյ: Նույնն են տոների նշանակման ձևերը. շրջանակներում՝ աղյուսակագիր: Լուսանցազարդերի մասին խոսելիս, գրում է. «Մեծի մասին բազմագունի մանեակներ են և ծոցի ժամացոյցի նման խարսխավոր շրջանակաձևեր և սկավառակներ, որոնց մեջ ազնիվ ակունք երփներփն կրնշողեն... ոմանց մեջ պարսիկ կամ արաբ գրերուն նման զարդեր և ոմանց ալ հույն և հայերեն տառերով անուններ դրոշմված են»: Թարգմանչացում այդպիսի զարդերը և գրություններ շատ են (Հմմտ. էջ 300, 311ա, 312ա, 318ա, 326բ, 343ա, 350բ, 388բ և այլն):

Ինչպես ծաղկազարդումները, այնպես էլ գրչությունը ցույց են տալիս, որ Գրիգոր գրչի Թեոդուպոլսի և Տիրացու գրչի Թարգմանչաց ավետարանները գրված են Գրիգոր Մուրղանեցու ընտիր օրինակից:

Իհարկե, կարող էին նրանք իրենց ձեռագրերը ընդօրինակել Թեոդուպոլիս-Կարինում: Եթե 1230 թ. Գրիգոր Մուրղանեցու օրինակը (կամ նրա օրինակից արտագրված մի այլ ձեռագիր) գտնվեր այնտեղ, որից օգտվեր Խաչատուրի որդի Գրիգոր Կարնեցին, ապա 1232 թ. նրանից (կամ հենց Գրիգոր Կարնեցու ձեռագրից) օգտվելին Տիրացու գրիչն ու Գրիգոր ծաղկողը՝ Թարգմանչաց ավետարանն ստեղծելու համար:

Այս ենթադրությունը փաստ դառնալու համար պետք է Թարգմանչացի ստացող պարոն Հովհաննէս քահանայի և Ումեկյան գերդաստանին անդամ պարոն Հովհաննէսի նույնությունը հաստատող վկայություն լինի, որն ստացման չկա: Իսկ մյուս փաստարկները (ձեռագիրը մենակ չգրելը կամ ողորմի խնդրելը) այստեղ կովաններ չեն: Ուստի Կարինը Թարգմանչաց ավետարանի գրչության վայրը համարել չի կարելի: Ուրեմն գրչության վայրի մասին ենթադրությունը մնում է ենթադրություն: Հնարավոր չէ նաև նույնացնել Գրիգոր Կարնեցուն և Գրիգոր ծաղկողին, որոնք բոլորովին տարբեր անհատականություններ են: Ծատ բնորոշ է մեծավաստակ արվեստաբան Ս. Տեր-Ներսիսյանի կարծիքը այս առթիվ: Թեոդուպոլսի և Թարգմանչաց ավետարանների ծաղկողներ Գրիգորները «անկարելի է, որ նույն անձը ըլ-

լան: Երկու ձեռագիրները գլխազարդերը իրար հետ բաղդատելով թերևս դժվար ըլլա որոշ համոզում մը կազմիլ, բայց բարեբախտաբար կա Մատ-դժվար ըլլա որոշ համոզում մը կազմիլ, բայց բարեբախտաբար կա Մատ-թեոսի ավետարանի հրեշտակը: Ինչպես կարելի է երևակայել, որ նույն անձը նույն տարիներուն կըրնա նկարած ըլլալ Վենետիկի գեղեցիկ նկարը ուր բյուզանդական զգեստի ամեն մի մանրամասնությունն ճիշտ ներկայաց-ված է, և Թարգմանչաց ավետարանի շատ ավելի թույլ նկարը, ուր, ի միջը այլոց բյուզանդական Loros-ի ձևը չի հասկցած և այն վերածած է գիրքի մը, որ հրեշտակը կուրծքին առջև կրոնե»¹⁵:

Ուրեմն Թեոդուպոլսի և Թարգմանչաց ավետարանները իրար մոտեցնող հանգամանքը գալիս է նրանց գաղափար օրինակից, այսինքն՝ Գրիգոր Մուրղանեցու օրինակից, որի մասին վկայում է Գրիգոր Կարնեցին, և որը գաղափար օրինակ է ծառայել Թարգմանչաց ավետարանի համար: Գրիգոր Մուրղանեցու ընդօրինակած ընտիր օրինակը¹⁶ մեզ է հասել Կոստանդին Ուրհայեցի (1157 թ.)¹⁷, սրանից՝ Վասիլ Ուրհայեցի (1161 թ.)¹⁸, Կոզմա Խարբերդցի (1166, 1219 թթ.)¹⁹, սրանից՝ Ստեփանոս Երզնկացի (1201 թ.)²⁰, Գրիգոր Կարնեցի (1230 թ.)²¹, Տիրացու (1232 թ.)²², Գրիգոր Սսեցի (1238 թ.) (Կոստանդին Ուրհայեցու օրինակից)²³, Մխիթարիչ Գեոկեցի (1271 թ.)²⁴ և այլ գրիչների ընդօրինակություններով²⁵:

Այս ձեռագրերի և նրանց հիշատակարանների քննությունը ցույց է տա-լիս, որ Մուրղանեցու օրինակը տերունական և ավետարանիչների նկարներ չի ունեցել, այսինքն նրա գեղարվեստական զարդարվածությունը սահմա-նափակվել է համաբարբառի խորաններով, չորս ավետարանառաջներով (Կիսախորան կամ գլխազարդ, զարդագիր և լուսանցազարդ), զարդագրե-րով և լուսանցազարդերով:

Մխիթար գրիչը գրում է. «Ծրեցի ի գովելի արինակէ, ուղիղ և լի արուեստի ի բան և ի գիր, ի տուն և ստոր, և ի գրադարձս, և եղանակս, և ի վանկս, և յառագանութիւնս, զոր կոչեն Գրիգորի Մուրղանեցոյ՝ ի բազմաց վկայեալ»²⁶: Ինչպես տեսնում ենք Մուրղանեցու օրինակը աչքի է ընկնում գրչության արվեստի քերականական կանոնների կիրառման կատարելու-թյամբ, ամեն ինչ ուղիղ է, ճշգրիտ, բանը, գիրը, տունը և տնհատումը, բա-ժանված ստորակետով, տողադարձը, եղանակը, վանկերը և առոգանության

¹⁵ «Գրիգոր ծաղկող», էջ 14, ծթ.:

¹⁶ Հ. Ոսկյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, Հ. Բ. Վիեննա, 1969, էջ 148:

¹⁷ Ս. Մուրադյան, Ն. Մարտիրոսյան, Ցուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-թարգ-մանչաց վանքի և շրջակայից Երուսաղեմ, 1967, էջ 1:

¹⁸ Ա. Սանջյան, Ցուցակ Միացյալ Ահաբանների հայերեն ձեռագրաց, Լոռու-Անջելոս, 1976, էջ 380—381 (անգլերեն):

¹⁹ Մատենադարան, ձ. № № 7347, 7734:

²⁰ Մատենադարան, ձ. № 10359:

²¹ Բ. Սարգիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վե-նետիկ, Հ. Ա. 1914, էջ 567—574: Հմմտ. Հայկական մանրանկարչություն, Հ. Ա. Վենետիկ, 1966:

²² Մատենադարան, ձ. № 2743:

²³ Գ. Հովսեփյան, Ցիշատակարան ձեռագրաց, Հ. Ա, Անթիլիաս, 1956, էջ 859—862:

²⁴ Մատենադարան, ձ. № 2814:

²⁵ Մատենադարան, ձ. № 280:

²⁶ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ—Դ. 1984, էջ 397—398:

նշանները: Վկայողներից մեկն էլ Մխիթարիչի ուսուցիչն էր, «վարդապետաց վարդապետն և երևելի» Կիրակոս Գանձակեցի պատմիչը:

Գլխավոր ավետարանները բաժանարարներով նշանակելու փոխարեն Մուրդանեցու օրինակում նշվում են լուսանցազարդերով, դիմացի գլխագիրը՝ զարդագրով, տողը՝ ոսկեգրով: Այս երևույթին առաջին անգամ հանդիպում ենք տասնամեկերորդ դարի կեսերին, նշանավոր գեղագիր, գրիչ և մանրանկարիչ Հովհաննես Սանդղկավանեցու մոտ, նրանից մեզ հասած երկու ձեռագրերում, հռչակավոր «Մողնու» և «Սանդղկավանքի» (1053 թ.) ավետարաններում²⁷, ընդ որում, երկուսն էլ, սրանցից զատ ունեն և տերունական և ավետարանիչների փառավոր նկարներ, իսկ լուսանցազարդերը՝ միայն տերևներ են՝ զարդագրին առընթեր: Հավանաբար, Բագրատունյաց թագավորության վերացումից հետո ստեղծված ծանր կացության ժամանակ շատ թանկ էր նստում ճոխ նկարազարդված ձեռագրերը: Ուստի Մուրդանեցին հրաժարվել է դրանից և Ավետարանի բնագիրը հարդարել է կետադրական նոր ժամանակներում կիրառվող նշաններով, ուղղել է աղավաղված կամ աղճատված բառերը, լուսանցքներում բացատրել որոշ բառեր, ընթերցվածներ կարգավորել և հանձնարարել ընդօրինակության: Հետագայում այդպիսի ձեռագրերում նկատվում է ավետարանիչների, ինչպես նաև տերունական նկարների մուծում:

Այնուամենայնիվ, որտե՞ղ է ստեղծվել Թարգմանչաց Ավետարանը, ինչպիսի՞ մշակութային միջավայրի ծնունդ է այն, որտե՞ղ են աշխատել Տիրացու գրիչն ու Գրիգոր ծաղկողը: Որոշումները տանում են Անի քաղաք:

Թարգմանչացի գրչի անվանը մի անգամ հանդիպում ենք Մարկոսի ավետարանի վերջում, «**Տիրացու գրծիչ**» ձևով: Մի Տիրացու գրիչի էլ հանդիպում ենք Անի քաղաքի Բեխենց վանքի գրչության կենտրոնում, որը գործում էր Տիգրան Հոնենցի հովանավորությամբ և հայր Եղբայրիկի առաջնորդությամբ XIII դարի առաջին տասնամյակներում: 1211 թ. այս վանքում Մարգարե ծաղկողը լրացրել ու նկարազարդել է նշանավոր Հաղբատի Ավետարանը (Մատենադարան, ձեռ. № 6288), խորաններից մեկում պատկերելով վանահայր Եղբայրիկին²⁸: Այստեղ է գրվել ու զարդարվել նաև Մատենադարանի № 5554՝ Բեխենց վանքի Ավետարանը, որի խորանների սյուների, գերանների, ինչպես և գլխազարդերի վարդյակների վրա հիշատակագրություններ են արձանագրված: Խորանների գերանների վրա հիշատակագրություններ կան նաև Հաղբատի Ավետարանում: Հայ գրչության պատմության մեջ այս երևույթն առաջին անգամ նկատվում է Բեխենց վանքի ձեռագրերում, մի փոքր ուշ՝ նաև Հոռոմոսի մատյաններում, և դիտվում է որպես Անի քաղաքի մեծարվեստ ճարտարապետության, եկեղեցիների կամարների, սյուների, մուտքերի ճակատաքարերի վրա փորագրված բազմաթիվ վիմագիր արձանագրությունների ազդեցությունը գրքի գեղարվեստական հարդարանքի վրա²⁹:

Բեխենց վանքի Ավետարանի խորաններից մեկի գերանի վրա գրված է.

²⁷ Մատենադարան, ձ. № № 7736, 3793:

²⁸ Ա. Մաթևոսյան, Նշմարներ Անի քաղաքի գրչության և մանրանկարչության, «Բանբեր Մատենադարանի» № 14, էջ 106—135:

²⁹ Նույն տեղում, տե՛ս նաև Կ. Մաթևոսյան, Հոռոմոս-Անի ճանապարհին գտնվող կամարը, Պատմա-բանասիրական հանդես, 1982, № 1, էջ 143—147, նույնի՝ Ձեռագիր գրված Անի քաղաքի Բեխենց վանքում, Պատմա-բանասիրական հանդես, 1984, № 1, էջ 221—225:

«Եղբայրիկ զհայր Բեխենց վանից յիշեցէք յաղապս», իսկ մեկ այլ խորանի սյան վրա, վերից վար գրված է՝ «Տիրացու գրիչ»³⁰: Այս երկու հիշատակագրությունները սույն ձեռագրի գրչության ժամանակի և վայրի վկայություններն են (Հայր եղբայրիկն Անիում հիշվում է 1211 և 1222 թթ.), իսկ Տիրացու գրչի անվան մակագրությունը՝ նկարագարող խորանի սյան վրա, նրա նաև ծաղկող լինելու վկայությունն է:

Բեխենց վանքի Ավետարանը նկարագարուման տարրերով և գրչության հանգամանքներով շատ նման է Մատենադարանի № 7635 Ավետարանին (երկուսն էլ գրվել են ոչ թե ստացողի նախնական պատվերով, այլ նախատեսված են եղել վաճառքի համար)³¹: Այն ևս դասվում է Անի-Հոռոմոս մշակութային միջավայրի հուշարձանների թվին, զարդարված է խորաններով (գրիչ Սուրենեսի անունը պահպանվել է խորանի գերանի վրա գրված հիշատակագրության մեջ), ավետարանառաջներով, լուսանցազարդերով: Նախորդի նման չունի ավետարանիչների, տերունական նկարներ, որովհետև դրանց պատկերումը մատչանում սկզբնապես չի նախատեսվել:

Զարդարվածության բաղադրիչների այս նույն մակարդակն է ունեցել նաև Թարգմանչաց Ավետարանը, միայն ավելի ճոխ է գունազարդված: Թարգմանչաց Ավետարանի և Բեխենց վանքի Ավետարանի Տիրացու գրիչի անվան նույնությունը, խորանների ու ավետարանառաջների որոշ զարդերի ընդհանրությունը ինչպես այս, այնպես էլ անհական շրջանի մյուս՝ № 6735 Ավետարանի հետ, խորանների վրա հիշատակագրություններ գրելու սովորությունը, դրանց երկաթագրի տարրերի սեպաձև վերջավորությունը, ինչպես և այս բոլոր մատչաններում ավետարանիչների, տերունական պատկերների բացակայությունը թույլ են տալիս ենթադրելու, որ Թարգմանչաց Ավետարանը նույնպես կարող էր այդ միջավայրում ստեղծված հուշարձան լինել: Ինչ վերաբերում է ստացողին, ապա նրա անվանը կցված, «պարոնը» ևս Անիի միջավայրի համար բնորոշ երևույթ է:

Մատչանում ավետարանիչները, նրանց խորհրդանշանները, տերունական պատկերները, ինչպես նաև Ստեփանոս Սյունեցու խորանների մեկնությունը, որ գրված է խորաններն զբաղեցնող թերթերի ազատ էջերում, լրացվել են հետագայում Արցախում, ինչպես քիչ հետո կտեսնենք:

Թարգմանչաց Ավետարանի, անհական և Թեոդուպոլսի Ավետարանների նմանությունը Գրիգոր Մուրղանեցի հմուտ գրչի գաղափար օրինակից է, իսկ Թարգմանչացում ավետարանիչների խորհրդանշանների նախագաղափարը՝ Թեոդուպոլսի Ավետարանն է, որը գտնվել է Արցախում հենց այն ժամանակ, երբ այնտեղ երկրորդ անգամ նկարագարվում էր Թարգմանչաց Ավետարանը: Գնանք ձեռագրի հետքերով:

(Ծարունակելի)

³⁰ Մատենադարան, ձեռ. № 5554, էջ 8բ, 4ա:

³¹ Կ. Մաթևոսյան, Գրչի և ստացողի միջնորդը (Վաճառքի համար նախատեսված գիրքը միջնադարյան Հայաստանում), Պատմա-բանասիրական հանդես, 1990, 1, էջ 121—131: